ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<19>> հոկտեմբերի 2012թ. N 439

Ք.Արմավիր

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասով, 1.12-րդ կետի <<բ>> ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի Գորկի փողոցի N10 տան բնակիչ Վարդուշ Հովհաննիսյանի դիմումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի Արմավիրի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալության պետի 2012 թվականի հոկտեմբերի 5-ի եզրակացությունը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով Վարդուշ Հովհաննիսյանին հատկացնել 70000 /յոթանասուն հազար/ դրամ միանվագ օգնություն որդու՝ Վոլոդյա Աթոյանի ուսման վարձի վճարման նպատակով:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին /Փ.Կարապետյան /՝ սահմանված կարգով իրականացնել գումարի վճարումը<<Հայաստանի ազգային ագրարային համալսարան >> ՊՈԱԿ-ի <<Արդշինինվեստ բանկ>>ՓԲԸ հ/հ 247010053103 հաշվեհամարին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ